ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր Ի  Ա Ռ Ա Ջ Ի Ն  Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Հեռ. (+374 60) 700 312

______________ № ______________

Ձեր № ________________________

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՐԱՍԵՆՅԱԿ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԱՐՄԵՆ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

Ձեր ս.թ. նոյեմբերի 25-ի N 37/37.2/19751-14
գրության կապակցությամբ

Հարգելի պարոն Եղիազարյան

Կից տրամադրվում է Ձեր վերը նշված գրությամբ ներկայացված՝ ««Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային հարկի մասին», ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ եզրակացությունը:

Հարգանքով

**ՊԱՎԵԼ ՍԱՖԱՐՅԱՆ**

Կատ.՝ Ա. Վարշամյան
հեռ. (060) 700 264

**ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**««Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Արտոնագրային հարկի մասին», ««Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», ««Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին», ««Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», ««Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ**

Փաթեթով առաջարկվում է.

1) «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքից առանձնացնել նույն օրենքի թիվ 1 հավելվածով սահմանված գործունեության տեսակներին վերաբերող մասերը և դրանց վերաբերյալ ընդունել «Արտոնագրային հարկի մասին» ՀՀ նոր օրենք՝ արտոնագրային հարկը սահմանելով որպես տեղական հարկ,

2) վերանայել արտոնագրային վճարների հաշվարկման կարգը: Մասնավորապես, առաջարկվում է սահմանել, որ արտոնագրային վճարը կարող է հաշվարկվել ոչ թե մինչև 12 ամսյա, այլ մինչև 60 ամսյա ժամանակահատվածի համար: Զուգահեռաբար առաջարկվում

է շարունակել ներկայումս գործող «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնագրային վճարի չափը նվազեցնող զեղչային գործակիցների կիրառությունը՝ արտոնագրի ստացման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար սահմանելով զեղչային գործակցի կոնկրետ չափը, որի մեծությունը կախված է արտոնագրային վճար վճարող համարվելու ժամանակահատվածի տևողությունից (օրինակ՝ 60 ամսյա ժամանակահատվածի համար արտոնագրային վճար վճարող համարվելու դեպքում զեղչային գործակցի չափը առաջարկվում է սահմանել 0,5),

3) սահմանել վարչական տուգանք՝

ա) ֆիզիկական անձի կողմից առանց արտոնագրի «Արտոնագրային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքերի համար,

բ) արտոնագրային հարկ վճարողի կողմից արտոնագրում չնշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքերի համար,

գ) այլ ֆիզիկական անձին պատկանող արտոնագրով «Արտոնագրային հարկի մասին» ՀՀ օրենքի նախագծի 6-րդ հոդվածում նշված գործունեության տեսակով (տեսակներով) զբաղվելու դեպքերի համար:

Հաշվի առնելով վերը նշվածը, Փաթեթի ընդունումը, ըստ Փաթեթին կից ներկայացված տեղեկանքի, կառաջացնի մոտ 65 մլն դրամի չափով ՀՀ պետական բյուջեի եկամուտների նվազեցման՝ նույն չափով ավելացնելով ՀՀ համայնքների բյուջեների եկամուտները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Փաթեթի թե ընդունումը, թե չընդունումը ՀՀ պետական և համայնքների բյուջեների ծախսերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխման չի հանգեցնում: